ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի
13.09.2023թ. կայացած նիստի N 07 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 7 անդամները, 2 ծնող բացակայում էր:

Օրակարգ՝

1. Կառավարման խորհրդի 2023-2024 ուստարվա աշխատակարգի հատատում
2. 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն
3. Ուսումնական հաստատության 2022-2023 ուստարվա ներքին գնահատման հավետվության մասին
4. Ընթացիկ հարցեր

Քարտուղար Ա.Մարտիրոսյանը ներկայացրեց կառավարման խորհրդի 2023-2024 ուստարվա գործողությունների ժամանակացույցը և աշխատակարգը:

Լսեցին՝

Տնօրենի պարտականություններ կատարող Մ.Նավասարդյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը:

Նշվեց, որ աշակերտները մեծ ակտիվությամբ մասնակցում են դպրոցական առօրյային, կազմավորվել են աշակերտական խորհուրդներ, ինչպես նաև սերտ համագործակցություն կա ծնողական խորհրդի հետ:

Լսեցին՝

Տնօրենի պարտականություններ կատարող Մ.Նավասարդյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա ներքին գնահատման ցուցանիշները:

Մ.Նավասարդյանը նաև փաստեց, որ 11.09.2023թ-ի դրությամբ ուսումնական հաստատությունում ձևավորվել է 18 դասարան, աշակերտների թիվը՝ 416 է, նոր ձևավորված թվով չորս 10-րդ դասարան ընդունվել է 93 աշակերտ:

Տնօրենի պարտականություններ կատարող Մ.Նավասարդյանը նշեց, որ ուսուցիչների 90%-ը ապահովված է դրույքին համապատասխան դասաժամերով:

Հիմք ընդունելով ներկայացված զեկույցներն ու փաստաթղթերը՝ կառավարման խորհուրդը

Որոշեց

1. Հաստատել2023-2024 ուստարվա կառավարման խորհրդի աշխատակարգը:
2. 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքները համարել բավարար:
3. 2023 թ-ի ներքին գնահատման արդյունքները համարել արժանահավատ և հրապարակել դպրոցի կայքում:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ա.Մկրտչյան

Քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան